Հասել էինք լաբիրինտի ծայրը: Բօնզան եւ ուղեկիցներս դուրս ելան արդէն. ես էլ ուզում էի հետեւել նրանց, երբ նորից հնչեց խմբերգը, արդէն շատ աւելի մօտիկից: Եւ տեսայ, թէ ինչպէս մի ներքին դռնից դուրս եկաւ մի ամբողջ թափոր: Երկար շարքերով գալիս էին վանականները իմ կողմը, ձեռքերը աղօթքի համար միացրած, մտասոյզ դէմքերով ու գերեզմանական խորհրդաւորութեամբ: Հասան ինձ ու անցան առջեւիցս իրանց յուղարկաւոր մեղմ երգեցողութեամբը. անցան ու մտան մօտակայ մեծ դահլիճը, ուր կարգով ու հանգիստ նստոտեցին ծալապատիկ իրար կողքին շարւած փոքրիկ սեղանների առջեւ:

Երգը լռեց: Կարծես մի աներեւոյթ հրամանով բոլորն էլ հանեցին իսկոյն իրանց գօտիներից մի-մի հովհար եւ սկսեցին դէմքերին հով տալ: Եւ մի առ ժամանակ ամբողջ դահլիճում լսւում էր միայն մի քանի տասնեակ հովհարների այդ խշրտուքը: Այդ ամենը այն աստիճան մի թատրոնի տպաւորութիւն էր անում, որ ես քիչ աւելի մօտ գնացի եւ յենւեցի դահլիճը նայող վանդակին: Ինձ վրա ո՛չ մի ուշադրութիւն – այնտեղ կայի, թէ ոչ:

Կողմնակի մի դռնով շուտով դահլիճ մտաւ մի բօնզա եւ ամբողջ խմբի առջեւից անցաւ իր տեղը, նոյնպէս մի փոքրիկ սեղանի առաջ: Եւ լսեցի իրար խփւող փայտերի յստակ ու կանոնաւոր բաղխումը – կարծես չափ էին տալիս:

Թողին հովհարները: Բոլորը մէկանց, մէկ մարդու պէս վեր ցատկեցին հաւատացեալների խորին մի յափշտակութեամբ, ձեռքերը պարզեցին դէպի երկինք, մինչդեռ քահանան ծունկ չոքեց: Յետոյ ընդհակառակը բոլորն էլ փռւեցին գետին ամբողջ մարմնով, միայն ձեռքի մատները տարօրինակ կերպով վերեւ դարձրած, ու մնացին անշարժ ու գետնատարած, մինչդեռ